

ՆԱԴԻՆԵ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի
առաջին կուրսի ուսանողուհի

ՀՏԴ 821.19.0

**ՊԱՆԴԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐԸ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Կոմիտաս, Մ.Աբեղյան, պանդուխտ, թախիծ, օտարություն, կարոտ, գեղջկուհի, վերադարձ, սպասում, Աստված:

Ключевые слова и выражения: Комитас, М. Абегян, странник, печаль, чужбина, тоска, крестьянка, возвращение, ожидание, Господь.

Key words and expressions: Komitas, M. Abeghyan, wanderer, sadness, stranger land, nostalgia, peasant woman, return, expectation, God.

Գրական որևէ ստեղծագործության ժանրային ուսումնասիրության համար կարևոր է ցույց տալ գրական տվյալ տեսակի ծագման հասարակական և գեղարվեստական նախադրյալները, տարբեր դարաշրջաններում գրականության մեջ նրա զարգացման առանձնահատկությունները, բացահայտել նրա տիպաբանորեն կայուն և պատմականորեն փոփոխվող գծերը և, վերջապես, նրա տարբեր ձևերն ու տեսակները մեր գրականության մեջ:

Գրական երկի գիտական ուսումնասիրության համար, նախ փորձենք գտնել «Ժանր» հասկացության գիտական սահմանումը: «Ժանր» տերմինը ծագում է ֆրանսերեն *genre* բառից, որը նշանակում է սեռ (երբեմն նաև տեսակ): Ժամանակակից գրական ըմբռնումներում ևս *ժանրը* գործածվում է գրական սեռի որևէ մի տեսակի իմաստով: Տարածված է նրա կիրառությունը գրական համեմատաբար փոքր միավորների՝ տեսակների նկատմամբ: Արվեստի բոլոր տեսակների, նույնիսկ առանձին վերցրած մի գեղարվեստական ստեղծագործության մասին մենք ասում ենք, որ նրանց բովանդակությունը կյանքն է, իրականությունը: Կյանքի արտացոլման յուրօրինակ եղանակ են հանդես բերում քնարական սեռի ստեղծագործությունները: Այստեղ առաջնայինը ոչ այնքան ինքը իրականությունն է, որքան նրա առաջացրած ապրումները, վերաբերմունքը, տրամադրություններն ու հույզերը: Նշենք նաև, որ գրական սեռերի ամենատարբեր զուգորդումների հիման վրա գրականության մեջ առաջացել են ժանրային նոր տարբերակներ: Ժանրերի զարգացման հիմքը (գրական նոր տեսակների ծնունդը) հասարակական կյանքն ու նրանում ապրող

տարբեր մարդկանց, ազգերի պայքարն է, որն արտահայտում է դարաշրջանի գեղարվեստական մտածողությունն ու պահանջմունքները, ներկայացնում նրա պատկերը: Ամեն մի դարաշրջանում գրականության մեջ առաջ են քաշվում և զարգանում այն ժանրերը, որոնք իրենց բովանդակությամբ արտահայտում են ժամանակի ոգին ու ապրումները: Հայ ժողովրդական երգերի ինքնություն բաժինն են ներկայացնում պանդխտության երգերը՝ գրված գերազանցապես հայրենիների չափով: Այս երգերը պանդխտության մասին պատումներ են կամ պանդուխտի ապրումներն արտահայտող երգեր: Պահպանված ու գրառված պանդխտության երգերը թախծալի և հուզական պատումներ են: Պանդխտության երգերի հնչյունաշարը ծավալուն է, եղանակներն անկաշկանդ հոսող են, ունեն ազատ ձևակառուցվածք, անհատականացված էլևեջ (դասական նմուշներ են Կոմիտասի գրառած պանդխտության անտունիները և «Կռունկը»): Սրանց անվանել են նաև դարիբի երգեր, որոնք աղերսվում են միջնադարում հայ ազգային-սոցիալական կյանքին բնորոշ երևույթներից մեկին՝ պանդխտությանը: Միջնադարում պանդխտության երգերն ունեցել են իրեց այլաբանական արտահայտությունը և դրանց կողքին ի հայտ են եկել նաև կրոնական թեմայով ստեղծված պանդխտության երգեր, որոնք, սակայն, իսկական պանդխտության երգերի հետ աղերս անգամ չունեն:

Կրոնական պանդխտության թեմատիկան ծնունդ է առել աստվածաշնչյան այն առասպելից, որը պատմում է այն մասին, թե ինչպես Ադամին և Եվային իրենց հայրենիքից՝ դրախտից, Աստված արտաքսեց և դարձան նրանք պանդուխտներ: Այս տեսակ երգերի մեջ քարոզվում է աշխարհուրացությունը և քնարական հերոսը՝ պանդուխտը, որն իր առջև ունի մեկ խնդիր՝ առելություն երկրային կյանքի նկատմամբ՝ գովերգում է աստվածային հոգևոր կյանքը: Այստեղ պանդուխտի կողքին հանդիպում ենք նաև «դարիպ»-ին, ով նույնպես իսկական պանդուխտ չէ, այլ աշխարհիկ կյանքի ունայնությունն իր սրտում ունեցող անհատ: Այսպիսի երգերում մենք տեսնում ենք նաև այլաբանորեն ներկայացված այլ կերպարներ և իրադարձություններ, օրինակ՝ եկեղեցին համարվում է հարս, Քրիստոսը՝ փեսա, Մարիամ Աստվածածինը՝ վարդ, Գաբրիել հրեշտակապետը՝ սոխակ: Նրանց հարաբերությունները գովերգվել են իբրև սեր և կարոտ: Բայց այստեղ ընդամենը տեսնում ենք կրոնական սիրո դրվատանք, մինչդեռ միջնադարյան աշխարհիկ պանդխտության երգերում արծարծվում է միայն ու միայն սիրո ու կարոտի զգացումը՝ իրական կյանքի ու աշխարհի, մարմանական վայելքների, հարազատների ու հայրենիքի: Այսպիսով, մենք պանդխտության երգերի մեջ գտնում ենք հսկասական բևեռներ և արտահայտված տարբեր գաղափարներ, որոնք հիմք են կրոնական

պանդխտության երգն անջատելու միջնադարյան աշխարհիկ պանդխտության երգից: Այս է պատճառը, որ պանդխտության կամ դարիբի երգերը միջնադարից սկսված առնչվում են հայ մարդու պանդխտության հետ, որոնց բնորոշ են օտարություն մեկնողի և նրա հարազատների հրաժեշտի, պանդուխտի կարոտի, տառապանքի, հայրենիքում հարազատների սպասումների, ինչպես նաև պանդուխտի վերադարձի ու դրա հետ կապված ուրախ ապրումների մոտիվները: Երբեմն երաժիշտ-բանասերները հայ պանդխտի վիշտն ու կարոտը արտահայտող միջնադարյան երգերը կոչել են «Անտունի»¹: Այս բառը շատ երգերի մեջ գործածվում է ճիշտ այնպես, ինչպես տաղարանների մեջ «հայրենը» իբրև *երգ, երգի մի տեսակ*, «անտունի ասել» իբրև երգ ասել: «Անտուն» սովորաբար նշանակում է տուն չունեցող, բացատրված է նաև «առանց տան, իբրև պանդուխտ»² իմաստով: Այս բառի համանիշությունը պանդուխտ բառին տեսանելի է «Սիրտս նման էր էն փլված տներ» հայրենի ժողովրդական երգի վարիանտներից, որոնցից մեկի մեջ «դարիբի սիրտն է պղտոր ու մոլոր», իսկ մյուսի մեջ «անտունի սիրտն է պղտոր ու մոլոր»: Այսպիսով, «պանդուխտի հայրեն» ասելու փոխարեն, կարող էր ասվել «անտունի հայրեն»: Բայց պետք է նշել, որ «անտունի» բառը միայն «անտունի հայրեն» իմաստ և նշանակություն է ստանում, երբ պանդխտի երգը «հայրեն» է, հորինված է հայրենի չափով: Պանդխտի անտունիները միաժամանակ և սիրո երգեր են, այդ պարզ է նրանց բովանդակությունից:

Այսպիսով, «անտունի» բառի նշանակությունը ընդարձակվում է, քանի որ ժողովրդական երգի էական հատկություններից մեկն այն է, որ միևնույն երգը, անփոփոխ կամ փոքր փոփոխությամբ, իր բովանդակության պատճառով երգվում է իբրև սիրո երգ, կամ հարսանեկան, պանդխտի կամ օրորոցի երգ³: Սա բանաստեղծական առումով հնագույն գուսանական, հայրենների մի ճյուղը ներկայացնող տեսակ է՝ «Անտունի» անվամբ, որը գրի է առնվել XVI—XIX դդ. և բազմաբովանդակ է (հարսանեկան, սիրային, լացի, օրորոցի, պանդխտի երգեր): Պանդխտության թեմատիկայով անտունիների դասական նմուշներ են Կոմիտասի գրառած պանդխտի անտունիները: Ինչպես, օրինակ կոմիտասական այս երգը, որ կոչվում է «Անտունի».

Սիրտս նման է էն փլված տներ,
Կոտրեր գերաններ, խախտեր է
սներ,

¹ Հայկական համառոտ հանրագիտարան, 1, Երևան, 1990, էջ 224-225:

² Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի, հատ. I, Վենետիկ, 1836, էջ 247:

³ Աբեղյան Մ., Երկեր, հատ. Բ, Երևան, 1967, էջ 228-231:

Բուն պիտի դնեն մեջ վայրի
հաւքեր:
Երթամ՝ ձի թալիմ էն ելման
գետեր,
Ընիմ ձկներու ձագերացն կեր:
Ա՛յ, տօ լա՛ճ տնաւեր:

Սեւ ծով մը եմ տեսե, սիպտակն
էր բոլոր,
Ալին կգարներ, չէր խառնի
հիրոր:
Էն ո՛րն է տեսե մեկ ծովն
երկթաւոր,
Անտունի սիրտն է պղտոր ու
մոլոր:
Ա՛խ, իսկի մի՛ լնիք սրտիկ
սեւաւոր:
Ա՛յ, տօ լա՛ճ տնաւեր⁴:

Սա Կոմիտասի մեներգերից է դաշնամուրի նվագակցությամբ, որը պանդխտի հոգեվիճակն արտահայտող գեղջկական մի երգ է: Այս երգի բառերն առաջին անգամ գրառել և տպագրել է Գ. Սրվանձտյանը⁵: Այս և ժողովրդական այլ տարբերակների հիման վրա լույս է տեսել Կոմիտասի և Մանուկ Աբեղյանի խմբագրմամբ «Հազար ու մի խաղ» ժողովածուն⁶: Մեղեդին հայտնաբերել և մշակել է Կոմիտասը (հրատ. «Հայ քնար» ժող., 1907 թ.):

Հայ գրականության մեջ պանդխտության առաջին և լավագույն տաղերը գրել է 15-րդ դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշը: Նրա երգը ծնվել էր դարի հառաչանքից: Մ.Աբեղյանը գրում է, որ «պանդխտությունը 15-րդ և 16-րդ դարերից ի վեր մեր ժողովրդական կյանքի ավելի մեծ ցավերից է

⁴ Հազար ու մի խաղ, I հիսնյակ, էջ 6:

⁵ Սրվանձտյան Գ., Մանանա, Պոլիս, 1876, էջ 287:

⁶ Այս երգարանը տպագրվել է առանձին-առանձին գրքույկներով, որոնցից ամեն մեկն ամփոփում է 50 երգ. «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարան I հիսնյակ՝ տպագրված 1903թ. Վաղարշապատում և II հիսնյակ՝ տպագրված 1905թ. նույնպես Վաղարշապատում: Մենք մեր հոդվածում մեջբերված երգերի հղումները կատարել ենք ըստ հիսնյակների:

եղել⁷», իսկ սա նշանակում է նաև, թե այդ դարերում էլ պետք է ծաղկեին պանդխտության երգերը՝ լինեին դրանք հայրեններ, թե տաղեր:

Կոմիտասն ու Մանուկ Աբեղյանը ժողովրդական երգերի համահավաք ժողովածուում, որը կոչվում է «Հազար ու մի խաղ», նույնպես ներառել են պանդխտության երգեր, թեև թվով խիստ սահմանափակ: Այդ երգերում անչափ հուզիչ և սրտմաշուկ ձևով արտացոլվել են հայ ժողովրդի հինավուրց ցավի՝ պանդխտության վիշտն ու տառապանքը: Պանդխտի տառապագին ձայնը վառ արտահայտված է տաղի խոսքի և երաժշտության մեջ: Այս երգերում կա և՛ սեր, և՛ կարոտ, և՛ հեռացումի ցավ, և՛ կորստի վիշտ, և՛ հույս վերադարձի, և՛ հանդիպման սպասում: Ինչպես այս տաղում.

Կայնել եմ, գալ չեմ կարող,
Լցվել եմ լալ չեմ կարող,
Քանի որ գնացել ես,
Եար ջան,
Անունդ տալ չեմ կարող:

Աչքերս ճամփիդ մնաց,
Խելքս ինձանից գնաց.
Քո սիրուն, իմ գլխի տեր
Եար ջան,
Յոթն օր մնացի քնած:

Լավարա ջուրը սառն ա,
Օտարությունը դառն ա.
Տունդ դարձիր, իմ ախպեր
Եար ջան,
Բոլորքս պստիկ գառն ա⁸:

Կարոտագին, սիրատույն խոսքեր են սրանք, որ պատմում են գեղջուկ կնոջ կյանքի, ապրումների և սպասումների մասին: Գեղջկուհին իր ապրումները պատկերավոր ու հայելային է դարձնում բնանկարի ձևով: Նա օտարության դառնությունը համեմատում է Լավարա ջրի սառնության հետ, որպեսզի ցույց տա պանդխտությունից ծնված իր դառնագին ապրումները:

⁷ Աբեղյան Մ., Երկեր, հատ. Բ, Երևան, 1967, էջ 279:

⁸ Հազար ու մի խաղ, II հիսնյակ, էջ 22:

Գեղջկուհին անգամ լալ չի կարող, քանի որ բաժանման ցավն ու կարոտը այնքան է մեծ, որ սիրելիի անունն անգամ արտաբերելը դժվար է, բայց և կա հանդիպման հավատ և հույս, տունդարձի կանչ այս տաղում. «Տունդ դարձիր, իմ ախպեր յար ջան, բոլորքս պատիկ գառն ա»:

Մեկ այլ տաղում էլ, պատկերավոր կերպով գեղջկուհի հարսը նկարագրում է, որ ամուսնու բաժանումից, սիրո կորստից իր «ամեն տեղիկն է ցավում» և հարսի ցավին ի դարման սկեսուրը խոստանում է գիր անել ու տղին ետ բերել.

— Մա՛յրիկ, քո որդուդ սիրուն
Իմ ամեն տեղիկս է ցավել:—
«Մի լար, մի տըխրիք
հա՛րսնուկ,
Գիր կանեմ, որդիս կըբերեմ»,
— Գիր անես, որդիդ բերես՝
Աստծու լուսուն տիրանաս,
Գիր չանես ու չըբերես՝
Կանիծեմ ու քար կդառնաս⁹:

Մեկ այլ տաղում է գեղջկուհին ինքն է արցունքն աչքերին նամակ գրում իր յարին.

Կանգնեմ քարին ու սարին,
Գիր գըրեմ դարիք եարին,
Արցունքով գըրեմ, կանչեմ,—
Աղու կըտրի սենց տարին¹⁰:

Պանդխտության իրական պատկերն արտացոլված է «Ղարիբ եմ՝ Կարս գնացի» տաղում: Այստեղ դարիքը ներկայանում է պատկերազարդ իր ողջ գունապնակով, գունապնակն այս ցավոք լի է գորշ ու մուայլ տրամադրություններով: Ջուր չկա, աղբյուր չկա, շուրջբոլորը քար է ու սար, — ահա այստեղ է զգացողության արտահայտման բարձրակետը: Ջուրը կյանքի սկզբնաղբյուրն է, առանց որի հնարավոր չէ ապրել: Ջուրը կյանքի հիմքն է, հենց ինքը՝ կյանքը, որը նշանակալից պատկերավորման միջոց է դարձել այս խաղիկում.

⁹ Նույն տեղում, էջ 23:

¹⁰ Հազար ու մի խաղ, I հիսնյակ, էջ 26:

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբութիւն դըժուար ա,
Աստուա՛ծ սիրէք, բան
չասէք,
Ղարիբն էս ի՛նչ անճար ա:

Ես ղարիբ եմ՝ ջուր չըկայ,
Սարերին աղբիւր չըկայ,
Վախենամ ղարիբ մեռնեմ,
Վըրէս մէր ու քուր չըգայ:

Սն եմ, սևաւոր հաւք եմ,
Դեղին թևաւոր հաւք եմ,
Ինձ մի բա՛ց թողէք,
թըռչեմ,

Երամի սովոր հաւք եմ¹¹:
Ղարիբության ցավի նկարագրման բարձրակետ է պատկերավորված
մեկ այլ խաղիկում, ուր տարաբախտ ղարիբն իրեն համարում է սևաբախտ և
աշխարհքումս ոչինչ չունեցող.

Ղարիբ հաւքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի.
Ինձ նման սևաբախտը
Աշխարհքումս ինչ
ունի¹²:

Ժողովածուն կազմող պանդխտության երգերի թագն ու պսակը,
միջնադարյան պանդխտության «երգ-երգոցը» «Կըռո՛ւնկ, յո՛ւստ կուգաս»
տաղն է, որն այնքան համահունչ ու ներդաշնակ է տարագիր ու
տարաբախտ մեր ժողովրդին, նրա ողբերգական օրերի պատմությանը:
Կռունկը մեծ խորհրդանիշ է այստեղ, նա հենց ինքը պանդուխտն է՝
տարագիր հայն իր տարաբախտ կյանքով:

–Կըռո՛ւնկ, յո՛ւստ կուգաս:
–Բաղդատայ չոլէն:
–Խաբրիկ մը չունի՞ս
Իմ հորէն, մորէն:

¹¹ Հազար ու մի խաղ, II հիսնյակ, էջ 28:

¹² Նույն տեղում, էջ 29:

–Քու հերն է մեռի,
Քու մէր շըւարի,
Առի ուր ձեթկիկ
Չագեր, ձըւարի¹³:

Այսպիսով, պանդխտության երգերն ունեն հատուկ հուզականություն, լիրիզմ, որոշ դեպքերում նաև՝ դրամատիզմ: Մրանք հուզիչ և սրտառուչ խոսքեր են՝ արտահայտված մի քանի բառով կամ մի քառյակով, բայց երբեմն տարբեր քառյակներ իրար միանալով կազմում են ընդարձակ երգեր: Այս երգերի լեզուն միջին հայերենն է, նրանցում հանդիպում ենք նաև կենդանի խոսակցական գավառական բազմաթիվ բարբառներ: Այս երգերի մեղեդին, եղանակը, ինչպես և երգերի բնագրերի բովանդակությունը, արտահայտում են հայ պանդխտի ապրումները: Եվ զգացմունքայնությունն այս երգեր ավելի արտահայտիչ է դառնում, երբ պանդխտի հոգեվիճակը համեմատվում է բնության հետ.

Ամպեր է գարուն կու
գայ,
Սև սրտէս արին կու
գայ¹⁴:

Ճիշտ է, գարունը ազդարարում է բնության զարթոնքը, նոր կյանքի սկիզբը «գարուն կու գայ», բայց դարիբի կնոջ սրտից արյուն է գալիս, քանի որ իր յարը տանը չէ: Ահա այսպիսի համեմատությունների շնորհիվ է նաև այս երգերի այդչափ մեծ հուզականությունն ու զգայականությունը: Եվ բնավ պատահական չէ, որ այսօր էլ բանաստեղծներն իրենց լավագույն ստեղծագործություններում օգտագործում են պանդխտության երգերի պոետիկական պատկերներն ու սյուժեները:

Ն. Շահբազյան

Պանդխտության երգերը «Հագար ու մի խաղ» ժողովածուում Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է հայ միջնադարում, եղած պանդխտության երգերի երկու տեսակների համառոտ նկարագիրը՝ հոգևոր և աշխարհիկ:

¹³ Հագար ու մի խաղ, I հիսնյակ, էջ 53:

¹⁴ Նույն տեղում, էջ 22:

Կոմիտասը գրառել և մշակել է բացառապես աշխարհիկ կյանքին վերաբերող պանդխտության երգեր, որոնցում առկա են և՛ պանդխտի թախծալի ապրումներն օտարության մեջ, և՛ նրան կարոտով սպասող կնոջ ծանր հոգեկան տվայտանքները: Կոմիտասի և Մ.Աբեղյանի գրառած պանդխտության երգերը գեղարվեստական ներգործուն ուժ ունեն: Դրանցում հիանալի ձևով ներկայացված է հայրենաքաղաքությունն ու հարազատների նկատմամբ անսահման սերը:

Н.Шахбазян

Песни странствий на чужбине из сборника «Тысяча и одна песня»

Резюме

В статье дается краткое описание двух видов песен странствий на чужбине – духовных и светских, бытовавших в армянском средневековье.

Комитас записал и обработал песни странствий, касающихся исключительно только светской жизни, в которых присутствуют и печальные чувства странствующего на чужбине, и тяжелые душевные переживания с тоской ожидающей его жены. Песни странствий на чужбине, записанные Комитасом и М. Абегианом обладают силой художественного воздействия. В них прекрасно отражены тоска по Родине и безграничная любовь к родным.

N. Shahbazyan

Songs of Wandering in Stranger Land from the Miscellany *A Thousand and One Song*

Summary

The article presents the short description of two kinds of songs of wandering in stranger land: religious and secular, which were sung during the Armenian Middle Ages. Komitas wrote down and arranged wandering songs concerning only secular life in which there are either sad feelings of the wanderer in stranger land or painful sufferings of his wife waiting for him with nostalgia. Songs of wandering in stranger land written down by Komitas and M. Abeghyan have a great strength of artistic influence. They wonderfully show either the fatherland nostalgia or an unlimited love for relatives.